Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Հայագիտությունն իր բազմազան ճյուղերով որպես գիտություն սկսեց զարգանալ Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում: Այդ շրջանում ինչպես գիտության այլ բնագավառներ, այնպես էլ գրականագիտությունը հիմնականում համախմբվեց Երևանի պետական համալսարանի կամարների ներքո: Հայագիտության զարգացման գործում նույնպես մեծ դեր խաղաց Հայաստանի կուլտուրայի և պատմության ինստիտուտի ստեղծումը: Հայագիտությունը պատշաճ տեղ գրավեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի՝ Արմֆան-ի համակարգում: Ահա այս հենքի վրա Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում 1943 թ. հիմնվեց Գրականության ինստիտուտը, որը 1944 թ. անվանվեց ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի անվամբ:

Հայ հին և միջնադարյան գրականություն – *Լինելով ԳԱ հիմնադիր անդամ ակադեմիկոսներից՝ Մ. Աբեղյանն իր երկհատոր «Հայ հին գրականության պատմություն» (1-ին հ.՝ 1944 թ., 2-րդ հ.՝ 1946 թ.) կոթողային աշխատանքով հիմք դրեց հայ գրականության ակադեմիական ուսումնասիրությունների:*

Ակադեմիական նույն չափանիշներով 1936–1954 թթ. իրականացվեց «Սասնա ծռերի» պատումների մեծ մասի գիտական հրատարակությունը չորս գրքերով:

Միջնադարյան ձեռագրերով վկայված և ժողովրդական ակունքներ ունեցող տարբեր ժանրերի՝ գրույցներ, խրատներ, պանդխտության երգեր՝ հրատարակվել են համապատասխան քննական մոտեցմամբ և վերլուծմամբ:

Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատասիրությամբ և հանգամանալից առաջաբանով լույս տեսավ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական բնագիրը (1961 թ.), ինչպես նաև «Էջեր հայ միջնադարյան արձակից» (1957 թ.) և «Պատմություն Փարիզի և Վիեննայի» (1966 թ.) գրքերը:

Ակադեմիկոս Արամ Ղանալանյանը հետևողականորեն զբաղվել է հայ բանահյուսության գանձերի գրառմամբ, խմբավորմամբ և առանձին գրքերի հրատարակմամբ («Հայկական առածանի», 1951 թ., երկրորդ հրատարակությունը՝ «Առածանի», 1960 թ., «Հայ շինականի աշխատանքային երգերը», 1937 թ., «Ավանդապատում» ժողովածուն, 1969 թ.), ինչպես նաև անդրադարձել հայ դասական գրողների երկերում առկա բանահյուսական նյութերին և հայ բանագիտության տեսական խնդիրներին («Դրվագներ հայ բանագիտության պատմության», 1985 թ.):

Համակողմանի ուսումնասիրման է ենթարկվել հայ միջնադարյան գրականության ժանրային համակարգը: Լույս է տեսել «Հայ միջնադարյան գրականության ժանրեր»(1984 թ.) կոլեկտիվ աշխատանքը, առանձին մենագրություններ են նվիրվել սրբախոսական գրականությանը (Ք. Տեր-Դավթյան), հայ միջնադարյան ողբերին (Պ. Խաչատրյան), կաֆաներին (Հ. Սիմոնյան), պանդխտության երգերին (Մ. Մկրտչյան):

1950-ական թվականներից ինստիտուտում առանձնակի կարևորություն է տրվել հայ միջնադարյան բանաստեղծության ուսումնասիրմանը: Այս բնագավառի կոթողային աշխատանքներից է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի քննական բնագրի կազմումն ու ծանոթագրումը, այն իրականացվել է 61 ձեռագրերի հիման վրա՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի աշխատասիրությամբ: Առանձին գրքերով լույս են տեսել X–XVIII դդ. բանաստեղծների ստեղծագործությունները՝ այս հեղինակներին նվիրված մեկնաբանություններով: Հրատարակվել է XVI–XVII դդ. ընդգրկող «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» երկու հատորով և մեկ հատորով ուսումնասիրություն՝ նվիրված հիշյալ դարերի բանաստեղծություններին (քննական բնագրերի կազմումը՝ Հ. Սահակյանի): Համապատասխան մեկնաբանություններով կազմվել են հայ պատմագրության և թարգմանական մատենագրության երկերի քննական բնագրերը:

Հայ նոր գրականություն – *XVIII դարով սկզբնավորվող և մինչև XX դարասկիզբը հասնող հայ նոր գրականության պատմության շրջանը բազմիցս ուսումնասիրվել է, ստեղծվել են առանձին մենագրություններ հայ դասական հեղինակների կյանքի և գրական ժառանգության մասին: Այս բնույթի հետազոտությունների թվում են Ա. Տերտերյանի ուսումնասիրությունները՝ նվիրված Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Հովհ. Թումանյանին և մի շարք այլ դասականների (□Հայ կլասիկներ□ մեծադիր հատորում (1944 թ.):*

Առանձին մենագրություններ են նվիրվել Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Ռաֆֆուն, Ծերենցին, Գ. Սունդուկյանին, Հ. Պարոնյանին, Մուրացանին, Ե. Օտյանին, Հ. Թումանյանին, Ա. Իսահակյանին, Վ. Տերյանին և հայ մյուս դասականներին: Էդ. Ջրբաշյանը տասնամյակներ շարունակ հետևողականորեն զբաղվել է Հովհ. Թումանյանի և մի շարք այլ հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրմամբ: Ս. Սարինյանը զբաղվել է XIX դարի գրական ընթացքով և հատկապես Մուրացանի ու Ռաֆֆու ստեղծագործություններով, դրանք համապատասխանաբար դիտարկելով հայկական ռոմանտիզմի և ռեալիզմի ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրությանը, բանաստեղծի և համաշխարհային գրականության առնչություններին, ինչպես և հարուստ գրական ժառանգության ուսումնասիրմանն են ուղղված Ա. Վ. Իսահակյանի գիտական թվով հինգ մենագրությունները: Արևմտահայ բանաստեղծների գրական ժառանգության քննությանն է անդրադարձել Վլ. Կիրակոսյանը:

Առանձին մենագրական աշխատություններ են նվիրվել հայկական կլասիցիզմին (Մ. Թադևոսյան), հայկական ռոմանտիզմին (Ս. Սարինյան),

ինչպես նաև գրական տարբեր ժանրերի պատմությանը, տեսությանը և կառուցվածքին:

Կատարված այս աշխատանքի հիման վրա ստեղծվեց «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը (1962–1979 թթ.), ուր առաջին անգամ ամբողջությամբ ներկայացվել է հայ նոր գրականության պատմությունն իր զարգացման ներքին շրջափուլերով և գրական ուղղություններով, հեղինակներին նվիրված հոդված-դիմանկարներով: Առանձին բաժիններ են հատկացվել նաև արձակին, պոեզիային, աշուղական բանաստեղծությանը, դրամատուրգիային, մեմուարային գրականությանը, հրապարակախոսությանը և քննադատությանը: Հինգհատորյակի կարևոր արժանիքներից է և այն, որ նրանում հայ գրականության պատմության ընթացքը դիտարկվում է համաշխարհային գրականության զարգացման ընդհանուր համատեքստում: Հեղինակների թվում էին Ս. Սարինյանը, Ա. Ինճիկյանը, Գ. Ստեփանյանը, Ս. Աղաբաբյանը, Կ. Դանիելյանը, Լ. Ասմարյանը, Ս. Շտիկյանը, Ալ. Զաքարյանը և ուրիշներ: Հիշյալ հինգհատորյակը արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի (1980 թ.):

Ուսումնասիրվող հեղինակների թվով, հայ նոր գրականության աչքի ընկնող երկերի խորազնին վերլուծումով, հինգհատորյակն իրապես ֆունդամենտալ գիտական ձեռնարկ է, եզակի իր բնույթի մեջ:

Հայ նոր գրականության պատմության ուսումնասիրման բնագավառում հաջորդ կարևոր ձեռքբերումը «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակն է (հեղինակներ՝ Ս. Սարինյան, Վ. Կիրակոսյան, Ա. Ալեքսանյան, Լ. Ասմարյան, Մ. Սաղյան, Ս. Հարությունյան): Այն հայ քննադատական մտքի պատմության ամբողջական վերլուծման առաջին փորձն է: Երկհատորյակը հնարավորություն է տալիս վեր հանելու տեսության ու գրական ընթացքի միջև եղած ուղղակի կապը և թե քննադատական միտքը գաղափարական ու գեղագիտական ինչ խնդիրներ է առաջադրել գրականությանը և դրանք ինչպես են լուծվել ժամանակի ստեղծագործողների կողմից:

Հայ նոր գրականության բաժնի մնայուն գիտական աշխատանքներից պետք է համարել «Հայ վեպի պատմություն» ֆունդամենտալ կոլեկտիվ ժողովածուի ստեղծումը: Այն իր ձևի մեջ նույնպես մի եզակի ձեռնարկ է, ուր իր ստեղծման, զարգացման բոլոր փուլերով դիտվում է վեպի ձևավորման գործընթացը: Ժողովածուի հեղինակների թվում են Ս. Սարինյանը (գլխ. խմբագիր), Ռ. Նանումյանը, Ն. Անանյանը, Գ. Հակոբյանը, Ա. Ալեքսանյանը, Ս. Մարգարյանը, Լ. Մուրադյանը:

Գրականության պատմության ժամանակագրական, փաստական և աղբյուրագիտական հիմքը գրական ընթացքի ժամանակագրությունն է: Ռահատոր «Հայ նոր գրականության ժամանակագրությունը» ընդգրկում է 1801–1875 թթ.: Նույն նպատակին են ծառայում նաև առանձին հեղինակների կյանքի և ստեղծագործության ժամանակագրությունները և գիտական կենսագրությունները: Ինստիտուտում այժմ ընթացքի մեջ են Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության տարեգրության (գիտական խմբի ղեկավար՝ Վ. Կիրակոսյան) և Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրության ստեղծման աշխատանքները. Ա. Վ. Իսահակյանի հե-

ղինակությամբ լույս է տեսել վերջինիս առաջին հատորը, ընթացքի մեջ է երկրորդը: Առաջիկայում կամբողջացվի և լույս կտեսնի Խաչատուր Աբովյանի գիտական տարեգրությունը երկու հատորով (Պիոն Հակոբյանի շնորհակալ գործը շարունակում է դուստրը՝ Անահիտ Հակոբյանը):

Երկերի ստեղծագործական պատմության և գրողների կենսագրության ամբողջացման համար մեծ նշանակություն ունեն ժամանակակիցների հուշերը դասական հեղինակների մասին, դրանք գրականության պատմության մի կարևոր մասն են կազմում: Անցնող տասնամյակների ընթացքում լույս են տեսել ժամանակակիցների հուշերը Միսաք Մեծարենցի, Րաֆֆու, Ղևոնդ Ալիշանի, Թումանյանի, Չարենցի և մի շարք այլ դասականների մասին:

Ակադեմիկոս Ա. Կարինյանն իր աշխատություններով նոր շրջանի հայ գրականությունը դիտարկել է XIX դարավերջի և XX դարասկզբի հասարակական-քաղաքական շարժումների ու հատկապես ռուսական հեղափոխության շրջագծում: Ա. Կարինյանը նաև արժեքավոր հուշեր է գրել իր հարուստ ժամանակաշրջանի մասին՝ կարևոր տեղեկություններ տալով XX դ. հայ գրողների և գրական խմբակների ու հոսանքների մասին («Գրական արձագանքներ» (1955 թ.), «Գրական քննադատական հոդվածներ» (1962 թ.)):

Նորագույն գրականություն – *Գրականության ինստիտուտի հիմնադրման սկզբից առանձնակի ուշադրություն է դարձվել 1910-ական թվականների վերջերով սկսվող նորագույն գրականությանը և ընթացիկ գրական կյանքին: 1954 թ. հրատարակվեց հայ խորհրդային գրականության տարեգրության առաջին հատորը (1917–1950 թթ.), ապա լույս տեսավ 1951–1975 թթ. ընդգրկող երկրորդ հատորը: Լույս տեսավ նաև խորհրդահայ գրականության պատմության երկհատորյակը (հ. 1-ին՝ 1961 թ., 2-րդ հ.՝ 1965 թ.): Այս հրատարակության հիման վրա թարգմանաբար՝ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համատեղ 1966 թ. հրատարակվեց նաև ռուսերեն մեկհատորյակը:*

Ժամանակի սահմանափակումները և գաղափարական որոշակի արգելքները հաղթահարելով և մի շարք գրական-պատմական ու տեսական հարցեր վերանայելով՝ խորհրդահայ գրականության պատմության գրությանը ձեռնամուխ եղավ Ս. Աղաբաբյանը՝ հրատարակելով երկու հատորով (հ. Ա, 1986 թ., հ. Բ, 1993 թ.): Ս. Աղաբաբյանը հեղինակն է նաև Եղիշե Չարենցին նվիրված երկհատոր ուսումնասիրության: Առանձին մենագրություններ են նվիրվել նաև այս շրջանի հայ անվանի հեղինակներին, ինչպես նաև կոլեկտիվ աշխատանքներ՝ Ե. Չարենցի, Ա. Բակունցի և Դ. Դեմիրճյանի մասին:

Խորհրդահայ վեպի պատմությանն է նվիրված ԳԱԱ թղթակից անդամ Ս. Արզումանյանի «Սովետահայ վեպը» հինգ հատորանոց ուսումնասիրությունը, որի վերջին հատորն արդեն վերաբերում է արդի շրջանի հայ վեպին:

Հայ հին գրականության թեմաների՝ հայ նոր գրականությունում ունեցած անդրադարձին են նվիրված ակադեմիկոս Վ. Նալբանդյանի աշխատությունները:

Սփյուռքահայ գրականություն – *Անհատի պաշտամունքից հետո գաղափարական արգելքների վերացման և որոշակի մեղմացման պայմաններում սկսվեց սփյուռքահայ գրականության պատմության ուսումնասիրությունը: Գիտատեսական հետազոտություններին զուգահեռ այն ուներ նաև գիտագործնական նշանակություն՝ հայաստանյան ընթերցողներին ծանոթացնել Սփյուռքի գրականությանը: Առանձին մենագրություններ են նվիրվել սփյուռքահայ նշանավոր գրողներ Հակոբ Մնձուրուն, Շահան Շահնուրին, Համաստեղին, Զարեհ Որբունուն, Վ. Շուշանյանին, Ն. Սարաֆյանին, Վահե Հայկին, Ա. Ծառուկյանին և մի շարք այլ հեղինակների: Ուսումնասիրվում են նաև Սփյուռքի օտարալեզու հայ գրողների ստեղծագործությունները:*

Սփյուռքահայ գրականության պատմության ուսումնասիրման առաջին կարևոր քայլը դարձավ Գեղամ Սևանի «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր» երկհատոր աշխատանքը (հ. Ա, 1980 թ., հ. Բ, 1989 թ.): «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարի առաջին գիրքը ներկայացնում է Բենիամին Նորիկյանի, Լևոն Զավեն Սյուրմելյանի և Վահե Հայկի գրական դիմանկարները: Թե՛ գրականագիտական և թե՛ Հայրենիք-Սփյուռք կապերի տեսանկյունից կարևորվում է «Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին» ժողովածուն:

2009 թ. ինստիտուտում առաջինը ԳԱԱ համակարգում ստեղծվեց սփյուռքահայ գրականության պատմության ուսումնասիրության բաժին: Սփյուռքահայ առանձին հեղինակների ստեղծագործական ժառանգությունը ուսումնասիրման և նրանց նվիրված գրական դիմանկարները ստեղծելու գործին զուգընթաց բաժինը ձեռնամուխ է եղել երկհատոր «Սփյուռքահայ գրականության հանրագիտարանի» ստեղծմանը, ուր հանրագիտարանային բառահոդվածներով կներկայացվեն սփյուռքահայ հեղինակները, Սփյուռքի գրական կենտրոնները, միությունները և գրական մամուլը: Նման աշխատանքը փաստական առումով էականորեն կընդլայնի մեր ըմբռնումները սփյուռքահայ գրականության մասին, ինչպես նաև կդառնա սփյուռքահայ գրականության պատմության գրության աղբյուրագիտական հիմքը:

2010 թվականից ինստիտուտը պարբերաբար հրատարակում է «Գրական սփյուռք» տարեգիրքը, ուր համախմբված են հայկական սփյուռքի տարբեր համայնքներում ստեղծված գրական-քննադատական լավագույն նմուշները: Տարեգիրքն արդեն բարի համբավ է ձեռք բերել ընթերցող շրջաններում և թերևս հայրենիքում լույս տեսնող միակ պարբերական ժողովածուն է՝ նվիրված Սփյուռքի գրականությանը:

Հայ գրականության պատմության համակողմանի ուսումնասիրությունը հիմք ստեղծեց զբաղվելու նաև տեսական և տիպաբանական հարցերով, և այս բնույթի մի շարք կոլեկտիվ աշխատանքներ են ստեղծվել՝ «Հայ գրականությունը պատմագործառական լուսաբանությամբ» և «Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը», ուր քննվում են դասական մի շարք երկերի հասարակական ընկալումը ու արժեվորումը:

«Հայ գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում» թեմայի շրջանակում (ծրագրի ղեկավար՝ ակադեմիկոս Արամ Գրի-

գորյան) իրականացվել է մի շարք տեսական հիմնահարցերի քննությունը, որոնք վերաբերում են ազգային գրականության առանձնահատկություններին, ընդհանուր գրական շարժմանը: Հրատարակության է պատրաստվել □Հայ գրականությունը գրականության տեսության հասկացությունների լույսի ներքո□ կոլեկտիվ աշխատանքը:

Ինստիտուտի կարևոր ուղղություններից է հայ գրականության միջազգային կապերի և գրական փոխառնչությունների վերհանումը: Տարբեր տարիներ լույս են տեսել «Գրական կապեր» և «Հայ-ռուսական գրական կապեր» շարքերի հատորները: Առանձին մենագրություններ են տպագրվել նվիրված հայ-ռուսական (Գ. Հովնան, Ե. Ալեքսանյան), հայ-ուկրաինական (Ա. Ամիրյան), հայ-լեհական (Բ. Բարսեղյան), հայ-ֆրանսիական (Գ. Կարագյոզյան), հայ-անգլիական (Վ. Փարթամյան), հայ-հունգարական (Ե. Ա. Բազի-Գևորգյան) գրական առնչություններին:

Ներկայումս ինստիտուտի համաշխարհային և համեմատական գրականության ուսումնասիրության բաժինը սկսել է իրականացնել նոր գիտական ծրագիր՝ բացահայտել հայ և համաշխարհային գրականության առնչությունները: Հանրագիտարանային բնույթի երկհատոր այս կոլեկտիվ աշխատությունը կլուսաբանի հայ գրականության դարավոր կապերը համաշխարհային գրականության հետ, կուսումնասիրվեն նաև փոխադարձ թարգմանական գրականության առնչությունները (ծրագրի գիտական խմբի ղեկավար՝ պրոֆեսոր Հենրիկ Էդոյան):

Գրականության պատմությունը և առանձին հեղինակների ստեղծագործությունների քննությունը հնարավոր չէ առանց այդ հեղինակների երկերի ամբողջական ու ճշգրտված բնագրերի հրատարակության: Գրականության ինստիտուտը սկզբնավորման տարիներից ձեռնամուխ է եղել հայ դասականների երկերի լիակատար գիտական ակադեմիական բազմահատորյակների հրատարակությանը:

Անցնող տասնամյակների ընթացքում լույս են տեսել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռաֆֆու, Հ. Թումանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ռ. Պատկանյանի, Եղիշե Չարենցի, Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Պ. Պռոշյանի, Մուրացանի, Լեոյի, Դ. Դեմիրճյանի, Ակսել Բակունցի երկերի ակադեմիական հրատարակությունները:

Հայ գրականագիտության և հայ գրականության պատմության ուսումնասիրման համար առանձնակի կարևորություն ունեցան Մ. Աբեղյանի երկերի հրատարակությունը ութ հատորով:

Այժմ տպագրության ընթացքի մեջ է Ավետիք Իսահակյանի (14 հատոր, գլխ. խմբագիր՝ Ա. Վ. Իսահակյան), Լևոն Շանթի (9 հատոր, կազմող՝ Ա. Մանուկյան) և Նիկոլ Աղբալյանի (7 հատոր) երկերի հրատարակությունը: Լույս են տեսել Ավետիք Իսահակյանի երկերի առաջին, երկրորդ և չորրորդ հատորները, մինչև տարեվերջ լույս կտեսնեն երրորդ և հինգերորդ հատորները: Հրատարակվել են նաև Լևոն Շանթի առաջինից յոթերորդ հատորները, Նիկոլ Աղբալյանի յոթ հատորներից չորսը տպագրության կհանձնվեն հաջորդ տարի:

Միաժամանակ անուրանալի է վաստակը ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների, ովքեր աշխատել են ԳԱԱ համակարգից դուրս, սա-

կայն իրենց գրական գործունեությամբ մեծապես նպաստել են հայ գրականության և գրականության տեսության զարգացման գործին: Այդ անունների շարքում կցանկանայինք հիշատակել ակադեմիկոս Հր. Թամրազյանի՝ հայ քննադատական մտքի պատմությանը վերաբերող երեք հատորները և նոր ու նորագույն շրջանի հայ գրականությանը նվիրված ուսումնասիրությունները (ինչպես՝ «Եղիշե Չարենց», «Հովհաննես Թումանյան»): Ակադեմիկոս Լ. Մկրտչյանը ուսումնասիրություններ է նվիրել հայ-ռուս գրական կապերի և թարգմանության տեսության գիտական խնդիրների մասին, թղթակից անդամ Մ. Մկրյանը զբաղվել է թե՛ հայ հին և թե՛ նոր գրականության պատմության հարցերով, առանձին ուսումնասիրություններ նվիրել Գրիգոր Նարեկացուն (1955 թ.), Մովսես Խորենացուն (1970 թ.), Հովհաննես Թումանյանին (1981 թ.), թղթակից անդամ Գ. Անանյանը՝ Եղիշե Չարենցին, ինչպես նաև ունի հայ հրապարակախոսությանը նվիրված հետազոտություններ:

Այս չորս գիտնականներն էլ աշխատել են ԵՊՀ համակարգում ու իրենց մեծ վաստակն ունեն գրականագետների և ընդհանրապես բանասերների մի քանի սերնդի դաստիարակության ու մասնագիտական պատրաստման գործում:

ԳԱ հիմնադիր անդամ է ընտրվել (1943 թ.) հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը (ծնվ. 1875 թ.), ում ընտրությամբ ակադեմիան առավել թանկ և հարազատ դարձավ ժողովրդի համար, քանի որ Իսահակյանն ամենամեծ ժողովրդականություն վայելող հայ բանաստեղծներից է, հայ գրականության մեծանուն դասականը: Իսահակյանն իր ներկայությամբ ակադեմիական գիտությունն առավել կապեց հայ գրականության և մշակույթի հետ: Վարպետը շատ գործուն ձևով մասնակցում էր ակադեմիայի ժողովներին, բարձրացնում կարևոր հարցեր՝ կապված հայագիտության զարգացման արդի խնդիրների հետ:

Ի թիվս այլ գրական ստեղծագործությունների, որոնք հայտնի էին բազմահազար ընթերցողների, Իսահակյանը հանդես եկավ մի շարք բացառիկ արժեք ունեցող գիտաբանասիրական հոդվածներով, որոնցից կուզեինք առանձնացնել □Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին□, □Խաչատուր Աբովյանը և Վերք Հայաստանի□-ն, □Հովհաննես Թումանյան□, □Միքայել Նալբանդյանի անմահ հիշատակին□ ուսումնասիրությունները:

Իսահակյանից բացի՝ ակադեմիկոսներ են ընտրվել հայ անվանի գրողներ Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Վահագն Դավթյանը և Միլվա Կապուտիյանը:

Դերենիկ Դեմիրճյանը հայոց միջնադարին նվիրված իր ակնարկներով և հատկապես երկհատոր «Վարդանանք» պատմավեպով ոչ միայն գեղարվեստորեն վերարտադրեց հայոց պատմության այդ բախտորոշ ժամանակաշրջանը, այլև պատմական վերաիմաստավորման ենթարկեց մի շարք հարցեր և հատկապես ժողովրդի դերը պատմության կերտման գործում:

Ստեփան Զորյանն իր պատմական եռագրությամբ («Պապ թագավոր», 1957 թ., «Հայոց բերդը», 1959 թ., «Վարազդատ», 1967 թ.) համանման իմաստավորման ենթարկեց հայոց պատմության չորրորդ դարը, գրողի հա-

յացքով անդրադարձավ մեր պետականության կորստյան և ազգային միաբանության հարցերին:

Վահագն Դավթյանը հայոց պատմական Արարկիրի երկրամասի վերհուշերի միջոցով գեղարվեստորեն ներկայացրեց կորսված հայրենիքի թեման, ինչպես նաև «Թոնդրակեցիները» (1961 թ.) և մի շարք այլ պատմական պոեմներով մշակման ենթարկեց հայ պատմագրության տարբեր դրվագներ:

Միլվա Կապուտիկյանը ոչ միայն իր պոեզիայով, այլև հրապարակախոսությամբ մեծ ավանդ բերեց Սփյուռքում հայապահպանության գործին, պարբերաբար հանդես եկավ ի պաշտպանություն ազգային ավանդույթների, արծարծեց Արցախի ազատագրման հարցը:

Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտն այս տարի բոլորում է իր գործունեության 70-ամյակը: Ինստիտուտի տասնյակ տարիների հայագիտական աշխատանքը և հարյուրավոր տպագիր գրքերը թույլ են տալիս ասելու. 70 տարի համառ ու անխոնջ աշխատանք՝ ի փառս հայ ժողովրդի հոգևոր վերելքի:

ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АВЕТИК ИСААКЯН, ВАРДАН ДЕВРИКЯН

Р е з ю м е

Институт литературы имени М. Абегяна НАН РА – один из старейших институтов Армении. Он был основан в том же году, что и Академия наук Армении, в 1943 г. В состав Института входят следующие научные отделы: древней и средневековой армянской литературы, новой и новейшей армянской литературы, литературы армянской диаспоры, теории литературы, зарубежной литературы, текстологии и источниковедения, а также научной группы по изучению жизни и творчества Ов. Туманяна. Помимо филологических исследований Институт занимается научным изданием произведений классиков армянской литературы. За годы своей деятельности Институт издал сотни книг, монографий, научных исследований своих сотрудников, коллективные сборники. Большую роль в развитии литературоведения в Армении сыграли научные сессии, конференции, организованные Институтом литературы. Институт периодически публикует ежегодник «Гракан спюрк» («Литература диаспоры») и «Граканагитакан андес» («Литературоведческий журнал»).

M. ABEGHYAN INSTITUTE OF LITERATURE

AVETIK ISAHAKYAN, VARDAN DEVRIKYAN

S u m m a r y

M. Abeghyan Institute of Literature of NAS RA is one of the earliest Institutes of Armenia. It was established in 1943, along with Armenia's Academy of Sciences. The Institute has the following scientific departments: Ancient and Medieval Armenian Literature, Modern and Contemporary Armenian Literature, Literature of the Armenian Diaspora, Theory of Literature, Foreign Literature, Studies of Texts and Sources, as well as a research team on the life and legacy of Hovhannes Toumanyan. Along with philological studies the Institute goes in for scholarly publication of the classics of Armenian Literature. During the years of its activities, the Institute has published multitudes of books, monographs, works written by staff members and collections of articles. Literary studies in Armenia have been greatly promoted by scholarly sessions and conferences convened by the Institute of Literature. The regular periodic publications of the Institute are "Grakan Spiurk" ("Literary Diaspora") and "Grakanagitakan Handes" ("Journal of Literary Studies").